ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 231- Ա

08 ապրիլի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 206-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետի 2022 թվականի մարտ 31-ի Ն/1157-2022 զեկուցագիրը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու մասին» N 217-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետի «Կարինե Բոշյան» բառերը փոխարինել «Սերգե Ավետիսյան» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու մասին» N 206-Ա որոշումը:

08.04.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք. Գավառ